ՈՒՐԲԱԹ 6 ՄԱՐՏԻ 1881

ՈՒՐԲԱԹ 6 ՄԱՐՏԻ

Հրատարակվում է ամեն օր բացի երկուշաբթի և տոն օրերից։
Տարեկան գինն է 10 ռուբլի։
Առանձին համարներով իւրաքանչիւրը 5 կոպ.։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիրակի և տոն օրերից առաւօտեան 10—2 ժամը կէսօրից յետոյ։

Օտարազգաքաղաքացիք գիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով. Въ редакцію газеты «Мегу Айастанъ», въ Тифлисъ, կամ Rédaction de «Meghou Haïastani», à Tiflis (Caucase).

Խմբագրութեանս ուղղած Ձէ յօդուածները եւ Ձէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրոշի ստորագրութեամբ եւ հասցէով։ Խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնս իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարում են ամեն մի բառին 1½ կոպէկ։
Յայտարարութիւնները ընդունվում են պ. Բ. Շահվերդեանի պավիլիօնում։
Յայտարարութիւնները ընդունվումն հայերէն եւ օտար լեզուներով։

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

№ 32 ՔՍԱՆԵԻՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ № 32

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Երեանի քաղաքային վարչութեան մասին։
Ա զ գ ա յ ի ն.—Թղթակցութիւնք Նոր—Նախիջեւանից, Բագուից, Երեւանից և Թիֆլիսից։
Ք ա ղ ա ք ա կ ա ն.—Ցոյնական խնդիր.—Քաղաքական լուրեր։
«Մ ե ղ ո ւ» հ ե ռ ա գ ի ր ն ե ր։
Մ ա ն ր լ ո ւ ր ե ր։
Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

ԹԻՖԼԻՍ, 6 ՄԱՐՏԻ 1881 թ.

Թէ ի՞նչ աստիճանի մեր հասարակաց գործողները և մանաւորապէս Երեւանայ գործողները թշնամաբար են միմեանց վերաբերում, չ'կամենալով հնթադրել իւրեանց հակառակորդի մէջ անմեղ սխալանք, այլ անպատճառ անձնական չահեր, նիւթական շարժառիթ և մինչև անգամ քրէական յանցանք, մենք յառաջ կ'բերենք մի հետաքրքիր օրինակ։

Երեւանայ խորհրդարանում քննվում էր քաղաքին պատկանեալ հողերի կապալառուների գործը։ Կապալառուներից մէկը ներկայացնելով կապալադրամը նշանակած ժամանակից աւելի ուշ, պատճառ է տալիս գործադիր վարչութեանը առաջարկել խորհրդարանին դատաստանական վէճ սկսել կապալառուների դէմ (երկու հոգի են) և յետ առնել նոցանից հողերը։ Խորհրդարանը համաձայնվում է առաջարկութեան հետ։ Միւս նստում իրաւասուներից մէկը առաջ բերելով շատ պօրեղ, ըստ մեր կարծեաց, ապացոյցներ այդ վճռի սխալանաց մասին, առաջարկում է՝ վճիռը փոխել և կապալառուների դէմ դատ չ'բանալ, նամանաւանդ, որ կապալի ժամանակը աւելի չուտ կ'վերջանայ, քան թէ նոյն իսկ վէճը, որ անչուշտ քաղաքին հակառակ կ'վճռուի։ Խորհրդարանը համաձայնելով իրաւասուի առաջ բերած հիմունքին՝ իր վճիռը փոխում է։ Քիչ ժամանակից յետոյ, տեղւոյս «Կովկաս» պաշտօնական լրագրում, որի ուղղութիւնը քաղաքային ինքնօրինութեան վերաբերութեամբ շատ բարեկամական չէ, կարդում ենք մի անստորագիր թղթակցութիւն, որի մէջ ցոյց է տուած գլխաւորապէս այն բանը, որ միեւնոյն իրաւասուն ազգական լինելով կապալառուներից մէկի հետ, ուրեմն իւր շահերից դրդեալ տիպեց(?) խորհրդարանը իւր վճիռը փոխելու։ Այնուհետև գրեթէ բառացի առաջ բերելով խորհրդարանի նախագահի ճառը հակառակ միտեալ իրաւասուի ասածին՝ ո'չ մի խօսքով չէ միտում այն հիմունքները, որ իրաւասուն առաջ էր բերած և որոնց հետ խորհրդարանը համաձայնելով՝ փոխեց իւր առաջին վճիռը։

Մենք հետաքրքրուեցանք «Կովկասի» թղթակցութեամբ և հաստատ աղբիւրներից ստացանք տեղեկութիւններ, որոնցից ամենից առաջ երեւում է, որ միեւնոյն իրաւասուն ոչ մի ազգականութիւն և մինչև անգամ բարեկամութիւն չունէ իւր համանուն կապալառուի հետ, և որ գլխաւորն է—այս հանգամանքը դիտէ ամբողջ Երեւանը...։

Իսկապէս այստեղ մեզ չէ հետաքրքրում Երեւանայ կապալառութեան գործը, այլ մեզ հետաքրքրում է Երեւանայ գործողների յարաբերութիւնները։ Գրել պաշտօնական լրագրին թղթակցութիւն, յիշել մանրամասնաբար մի կողմի ճառի պարունակութիւնը, լռելով միւս կողմի պատճառաբանութեան մասին, և որ աւելի վատն է, en toutes lettres գրելով հակառակորդ իրաւասուի ազգանունը, դիտմամբ սուտ աւելացնել, որ նա կապալառուներից մէկի ազգական է,—ահա՛ մեր գործունէութեան տխուր և ցաւալի կողմը, որ մենք չեշտելով այստեղ առաջ ենք բերում։

Երևելի անգլիական մտածող և գիտնական Հրապարակաւոր Ջօն-Ստիւարդ Միլլը հետևեալ խրատն է տալիս հասարակաց գործողներին, որ և մենք առաջարկում ենք մեր գործողներին ի նկատի առնուլ.—

«Հասարակական գործերը վարելու համար, մանաւանդ ազատ հաստատութիւններին ուղղութիւն տալու համար, ամենից շատ հարկաւոր են հետևեալ յատկութիւնները. ընդունակութիւն համաձայնվելու համար, պատրաստականութիւն հաշտութեան համար, հակառակորդին զիջումին անելու, այլ և ընդունակութիւն լաւ առաջարկութիւնները այնպէս ձևաւերպելու, որ այդ ձևակերպութեան մէջ ինչքան կարելի է քիչ անպատուի հակառակ կարծիք ունեցողը»։

ԱԶԳԱՅԻՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆ

18 փետրվարի։

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

Այս օրերումը մեր Արուեստական դպրոցի հոգաբարձութիւնը ստացաւ վեհափառ Հայրապետէն մի օրհնութեան կոնդակ։ Այն բարեմաղթութիւններն, որ արել էր Նորին Օծութիւնը հոգաբարձուներիս համար եղաւ այնպիսի անկեղծ ուրախութեան պատճառ, որպիսին մարդկային կեանքի մէջ հազիւ է պատահում։

Որովհետև ես անարժանս էլ այդ հոգաբարձուներից մինն եմ, ուստի վրաս առնելով պարտք և իրաւունք, իմ ընկերներիս կողմանէ ևս կ'համարձակիմ առել և վկայել նոյնը, ինչ որ ինքս կը զգամ. ևթէ մենք մեր թոյլ զօրութիւնովն և չնչին ծառայութիւններովն կարողացանք խրախուսական խօսքերի արժանանալ մեր թանկագին Վեհափառ Հայրապետի կողմէն, որ մեզի համար ամենամեծ վարձատրութիւնն է, ինչ իրաւունքով այսուհետև մեր խնամքը և հոգատարութիւնը յիշեալ դպրոցի վրայ չաւելացնել և չ'կրկնապատկել, մեր ջանքը չ'թափել և չ'աշխատիլ այդ ազգային հաստատութեան յառաջադիմութեանը մասին։

Ես իմ վրայ պարտք դրի՝ յիշեալ կոնդակը ձեռքս բռնած, դպրոցի դահլիճը հրաւիրելով բոլոր աշակերտներին (73 հոգի) բարձրաձայն կարդացի նոցա առջև, իսկ ևթէ ընթերցանութիւնը աւարտեցի՝ ասացի նոցա հետևեալ խօսքերս։

« Տղայք, իմացէք որ մեր ծառայու-
« թիւնը և ձեր աշխատութիւնը այս
« դպրոցիս մէջ համեմատելով այն ա-
« կընկալութիւններին հետ, որն ունին
« մեզմէն մեր վեհ Հայրապետը և մեր
« ժողովուրդը, տակաւին չատնուազ են։
« Այս դպրոցը հիմնած է ձեզ համար,
« դպրոցիս ծախքը, կարասիքը և ամեն
« ինչ որ կ'տեսնէք՝ հասարակի դանձա-
« րանէն է, ձեր վրայ խնամք ունեցողն
« հասարակն է, և մենք հոգաբարձու-
« ներս նոյն հասարակի անդամներն և
« նորանից ընտրածներն ենք, և պա-
« տասխանատու ենք, այս դպրոցի մա-
« սին, վեհափառի, սրբազան առաջնոր-
« դի և Ն.-Նախիջևանի ժողովրդի առ-
« ջև։ Ուրեմն, ծրքան պարտաւոր ենք
« թէ մենք և թէ դուք կրկնապատկել
« մեր աշխատանքը և այսնորածին ղբպ-
« րոցը պարզերես կացնել ամենի առջև»։

Այս խօսքերս խորունկ տպաւորութիւն գործեցին աշակերտաց վրայ։

Այժմ խօսքս դարձնում եմ Արուեստական դպրոցի վրայ ուրիշ կողմից։

Մի օր, ճաշից յետ *), պատահեցայ ինձ անակնկալ մտնել դպրոցի արուեստանոցը, ուր աշակերտները աշխատում էին ազգային գործով, ձախարակագործութեամբ և հիւսնութեամբ։ (столярною и токарною работою)։ Մօտ 25 մանր տղայք լուռ մունջ ու հանդարտ զբաղուած էին դաստակների (верстакъ) առջև։ Աշակերտաց այդպիսի լռութիւնը ինձ տեղի տուեց կարծելու, որ գերմանացի վարպետը **) նմանապէս այդտեղ է։ Աշակերտները, ըստ սովորութեան, տեղերիցը ևլան, բարևեցին ինձ և նորէն նըստան ու չարունակեցին իրենց ընդմիջած գործը. բայց ես այս ու այն կողմ նայելով վարպետ չի տեսայ, և հարցուցի աշակերտներին թէ՝ ձեր վարպետը։ Աշակերտները տեղերից չ'չարժելով, սկսան աչքերով նորան փնտռելու և յետոյ պատասխանեցին թէ՝ «երևի գընացել է (քլատավոյէն) տեմիրանէն ատաղձ (տախտակ) բերելու», ասացին ու իսկոյն սկսան իրանց առջևի գործքը չարունակելու։ Այս բանը իմ վերայ այնպիսի ախորժ տպաւորութիւն արաւ, որ ես զմայլեցայ. բայց այն րոպէին ոչ ոքի չ'յայտնեցի իմ զգացմունքը, որն ահա այժմ հրապարակաւ և մեծ բաւականութեամբ յայտնում եմ ամենին։ Անշուշտ ամեն ոք նկատած պիտի լինի, որ ևթէ որ և է վարժատան դասարանից ուսուցիչը դուրս է գալիս ո'չ թէ 10 կամ 20 այլ մի վայրկեանով, իսկոյն աշակերտները չփոթ և աղմուկ են բարձրացնում, ի հարկ է խօսքս 10—13 տարեկան մանր տղայոց վերայ է։ Ուրեմն մենք հայերս պէտք է ունենանք աչքերուս առջև, որ ընդհանրապէս երեխայք և մանաւորապէս հայ երեխայք սիրում են ձեռարուեստ. այս անհերքելի ճշմարտութիւն է։ Հայը արուեստի մէջ քանքարաւոր է. հայի համբերութիւնը սրբատաշուկ ձեռագործքի մէջ չափազանց է. հայը գիւնեճանութեան մոլութենէն հեռի է. հայը աշխատանքի մէջ դիմացկուն է. հայը ամեն ֆիզիքական ծանր աշխատանք տանում է և չէ փախչում նորանից։ Թողնենք այն մոլոր կարծիքն թէ՝ հայը բնածին առևտրական ազգ է, բառիս եւրոպական իմաստով. գուցէ դայ ժամանակ, որ հայը այդ լինի, բայց մինչև ցայժմ ոչ եղել է և ոչ է ներկայումս։ Հայը բնածին հողագործ և արուեստաւոր ազգ է։ ևթէ այս և այն կողմերումը տեսնում են ցիր ու ցան ե-

*) Դպրոցի մէջ, մինչև կէսօրուայ ճաշը, ուսանում են պարապում. իսկ յետ կէսօրին, չորս ամբողջ ժամ արուեստով։

**) Ա.ր. դ. մէջ վարժապետ ասում են учитель-ին. իսկ վարպետ мастеръ-ին։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԵՐՈՊԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ ՄԵՐՈՊԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՐԹ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒ

«ՇՈՒՆԳԱ»

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ն. ՎԱՎՈՎԱՅԳՏՑԱՆ, 4-ՐԴ ՀԱՐՎԱԾԱՄԱՐՏԻ ՀԱՂԹԱՆԱԿՈՂ ՀԱՅ ԳՈՒՆԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ընկեր Վավոյանցի ստեղծագործական ուղին ամուր է կապված մեր ժողովրդի ազատագրական պայքարի հետ։ Նա ծնվել է 1873 թվականին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական)։ Ավարտելով տեղի ռեալական դպրոցը, նա ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ Այդ տարիներին էր, որ Ն. Վավոյանցը ծանոթանում է մեծ հեղափոխական դեմքերի՝ Ալեքսանդր Ծատուրյանի, Ստեփան Զորյանի, Ալեքսանդր Ջիբուխովի, Ալեքսանդր Խատիսյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Ալեքսանդր Ահարոնյանի, Ռուբեն Զարդարյանի, Ալեքսանդր Ծատուր

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԳՈՒԵԱԼ ՍՏՐԵԱՊՋԻՅ Պ. Մ. ԼԵՖԵԴԻՆՍԿԻՅ

ընդունում է պաշտպանութիւնը քաղաքային գործերի՝ նահանգական և դատաստանական առեւաններում:

Հասցէն Կ. Բարոնսկի փողոց, տուն Թամամշեվի, կարասեաց խանութների հանդէպը: Ընդունելութիւնն է 5-ից մինչև 7 ժամը ճաշից յետ:

3—3

ГРОМАДНЫЙ ВЫБОРЪ КРОВАТЕЙ

подносовъ замковъ, перьевъ, бумаги, ружьей, револьверовъ, стакановъ, цитратъ-магнезіи, конфектъ, варенья и пр *въ Англійскомъ магазинѣ.*

Тамъ-же: РАСПРОДАЖА пальто отъ 12 р., брюки отъ 4 р., трико отъ 70 к. арш., тарелки отъ 12 к. шт., кяхтинскій чай весенняго сбора прямо отъ плантаторовъ отъ 1 р. 5 к. до (самый лучшій) 2 р. за фунтъ безъ бумаги. варенье за ф. 85 к. 6—12

ԼՈՒՍԱՆԿԱՐԶԱԿԱՆ *ամէն տեսակ գործիքներ մինչև Ապրիլի 20 վաճառվում են շատ էժան:*

Հարցնել կենդրոնական գրատաճառնոցում:

3—5

ТАКСА

На 1 мѣсяцъ съ 1 Марта по 1 Апрѣля 1881 г.

Хлѣба печенаго

Изъ пшеничной муки:

1-го сорта. . . . за 1 фун. 5 к.
2-го ,, ... за 1 фун. 4 к.

Изъ той же муки, печенаго въ горнѣ (туземной пекарнѣ):

1-го сорта. . . . за 1 фун. 6 к.
2-го ,, ... за 1 фун. 4½ к.

Изъ крупчатой съ смѣсью пшеничной муки (джварисъ-мамисъ пури):

Лавашей 1-го сорта за 1 фун. 7 к.
,, 2-го ,, . за 1 фун. 5½ к.
,, 3-го ,, . за 1 фун. 5 к.

Мяса говяжьяго

1-го сорта. . . за 1 фун. 11 к.
2-го ,, ... за 1 фун. 9 к.
Надхребная часть мяса, отдѣльно вырѣзная (суки) . за 1 фун. 17 к.
—**Бараньяго** за 1 фун. 13 к.
—**Свинаго:**
1-го сорта . . . за 1 фун. 13 к.
2-го сорта . . . за 1 фун. 12 к.

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը հասուցանում է հասարակաց գիտութեան, որ նորա տեղում 10-ին առաջիկայ մարտի նշանակած է ամրդախօսութիւն, առանց կրկնամրդախօսութեան կապալառու տալու համար Նաւթլուղի քաղաքային գետինը, որ յարմարաւոր արօտատեղի է, 194 դեսեատին և 100 քառակուսի սաժէն տարածութեամբ, ապրիլի 1-ից ներկայ ամի մինչև 91-ն յունվարի 1884 թուականի: Այս առարկայի մասին պայմանները ցանկացողք կարող են տեսնել վարչութեան տեղում, ամէն օր 10 ժամից մինչև 2-ը կէսօրից յետ, բացի կիւրակի և տօն օրերից:

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ.

Դուրս նկատելի մասնակի տակից Մովսիսի խորհնացեայ **ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ.** *գինն է 80 կ.*

ԵՂԲ. ԱԲՈՎԵԱՆՑՆԵՐԻ

ԽԱՆՈՒԹԸ

տեղափոխուեցաւ կամրջի վերայից Մադաթեան փողոց, Աղէքսանդրեան այգոյ հանդէպը, գեն. Օրբելեանի տան մօտ, սեպհական տանը № 11 և 2:

5—5

«ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» *յողվի վերջին նիստը, որ նշանակուած էր մարտի 8-ին, պ. Արծրունու թատրոնում, չի կարող կայանալ այն մեծ և խորին սգի պատճառաւ, որ յանկարծակի տիրոց ամբողջ տէրութեանը: Նոր զեկուցմամբ կհրաւիրվի յարգելի հասարակութիւնը մի այլ յարմար ժամանակի:*

«ՎԷՆԷՐԵԱՆ ԱԽՏԵՐ»

գրքոյկը բժշկական գուշարեանցի ծախվում է Արովեանցների խանութում, Ալէքսանդրեան այգու հանդէպ: Գինն է 25 կոպէկ. իսկ առնվ թուով առնողներին տրվում է ցած գնով.

5—5

ՅաՏենի վճռակային ԿՕՆՍԻՍՏՈՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ *վրաստանի և Իմերէթի նշանակալ է* **ԱՃՈՒԴԱԽՕՍՈՒԹԻՒՆ** *ի 6 մարտի սոյն ամի առանց հրկնաճարդախօսութեան, վասն տալոյ կապալառուի կրպակին պատկանեալ ամառոյն արբոյն էջմիածնի, գտանեցեալ ի 5 մասին Տփխիսոյ ի Բազախանայի:*

Անդամ Սարգիս աւագ քահանայ Ա. զաջանեան.

Ատենադպիր Բեկժանեաց.

2—3

ՄԻ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Որ շատ տարիներ գործնականութեամբ պարապած է այգեգործութեամբ զբաղի մէջ յանկանում է **ԳՈՐԾԱԿԱՏԱՐԻ** *պաշտօն ընտանի մեծ այգիներում տփխիսի մէջ կամ գուրսը: Գիտէ ծաղիկներ և բանջարեղէններ բուսցնել ծառերին հսկել, նոցա աշնուացնել և առհասարակ այգեգործութեան վերաբերեալ գործեր: Յանկացողները կարող են իւրեանց հասցէն «Մեղուի» խմբագրատանը թողնել:* 2—5

ԳՐԻԳՈՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ԲԱՐՍԵՂ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՂԱՆԴՈՒՐԱԼԵԱՆՑ ԵԻ ԵՂԻՍԱԲԵԹ ՏԷՐԴԱԻԹԵԱՆՑ *հոգեկան ցաւոք յայտնելով առաջինի կնոջ և վերջիններէ մօր* **ՍԱԼՕՄԷԻ** *մահը խնդրում են ազգականներին և ծանօթներին՝ շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին, Ղարիբեանի տնից № 7, վեքեամհեան փողոցում, Մողնու Ս. Գէորգ եկեղեցին, շաբաթ օրը, մարտի 7-ին առաւօտեան 10 ժամին:*

1—2

**Մոսկվայում այս օրերս լոյս տեսաւ Յարութիւն քահանայ Պօղոսեանցի աշխատասիրած պատարգի երկրորդ հատորը «Պատմութիւն նոր կտակարանի», հանդերձ կարևոր բացատրութեամբ և Պաղեստինու աշխարհագրոյցով: Գինն է 60 կ.: Գրավաճառներին նշանաւոր զիջումն կ'լինի: Յանկացողք կարող են դիմել հետևեալ հասցէով* въ Москвѣ, въ домѣ Армянской церкви, священнику Артемію Попову.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՏՈԿՈՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿ.

փետրվարի 1-ից մինչև յետոր կարգադրութիւն.

վճարում է.	*վերցնում է.*
1. *Ընթացիկ հաշուով.*	1. *Ջեղջուման առևտրական մուրհակների 6 ամսով . . 8%*
. *Հասարակ . 4%*	2. *Ջեղջուման մուրհակների, ապահովութեամբ անշարժ կալից . 8%*
բ. *Պայմանաւոր 4½%*	3. *Արժէթղթերի գերաւականով ընդունելիք պետական բանկայից 6 ամսով . 7½%*
գ. *Գումարների աւանդ.*	4. *Մասնաւոր ընթացիկ հաշիւ.*
ա. *Մինչև ցպահանջ 4%*	ա. *Ապահոված տոկոսաբեր թղթերով 8%*
բ. *6 ամսով . 5½%*	բ. *Մուրհակներով ապահովացրած երկու բաւորագրութեամբ 8½%*
գ. *Մի տարով . 6%*	5. *Ջեղջուման կլըրօնքների և թղթադրամների . . 8%*
դ. *Երկու տարով և աւելի . 6%*	

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԱՆ

վճարում է.	*վերցնում է.*
1. *Ընթացիկ հաշուով 4%*	1. *Ջեղջուման առևտրական մուրհակների մինչև 6 ամիս 8½%*
2. *մինչև ցպահանջ աւանդ . . . 4%*	2. *Արժէթղթերի գերաւականով.* ա. *Ընդունելիք պետական բանկայից 7½%*
3. *6 ամսական աւանդ 5%*	բ. *Անընդունելիք պետական բանկայից 8½%*
4. *Երկու և աւելի տարով աւանդ . 6%*	3. *Մասնաւոր ընթացիկ հաշիւներ՝* ա. *Ապահովացրած արժէթղթերով . 8%*
	բ. *Ապահովացրած մուրհակներով . 9%*

Ցանձնարարութիւններ ¹/₁₆% —2%.

ՓՈՏ—ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ.

Թիֆլիսից դէպի փօթի դուրս է գնում.

	Ժամեր.			*Տեղերի գինը.*		
	առաւ.	*կէս օր.*	*երեկ.*	I *կլ.*	II *կլ.*	III *կլ.*
				ռ. կ.	*ռ. կ.*	*ռ. կ.*
Թիֆլիզ.	9. 21	12. 56	5. 18			
Մցխէթ	10. 11	1. 57	6. 27	1. 13	85	44
Գօրի .	11. 58	4. 35	9. 43	4.	3.	1. 53
Մխխալ.	1. 29	6. 45	11. 57	6. 30	4. 73	2. 42
		գիշեր				
Բիօն .	6. 56	1. 45		11. 25	8. 44	4. 31
Փօթի .				16. 31	12. 24	6. 26

Փօթիից դէպի Թիֆլիզ.

	Ժամեր.			*Տեղերի գինը.*		
	Առաւ.	*երեկոյ.*	*գիշեր.*	I *կլ.*	II *կլ.*	III *կ.*
				ռ. կ.	*ռ. կ.*	*ռ. կ.*
Փօթի .	9. 3	10. 22				
Բիօն .	12. 13	3. 30		5. 13	3. 84	1. 97
Մխխալ.	5. 39	10. 1	1. 37	10. 1	7. 51	3. 84
		կէսօր.				
Գօրի .	7. 5	12. 20	4. 8	12. 33	9. 24	4. 73
Մցխէթ	8. 50	3.	7. 59	15. 19	11. 39	5. 82
Թիֆլիս				16. 31	12. 24	6. 26

Առաջին գնացքը Թիֆլիզ հասնում է 9 ժ. 31 ր. առաւօտեան, երկրորդը 3 ժ. 51 ր. կէսօրից յետ և երրորդը 7 ժ. 56 ր. առաւօտեան.

ՉՆՆ ՀԱՍՑՐԱՆ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

4 *մարտի.*

Կօնիումչեան Պօպպօնէի համար վիէննայից, Վամունդին, Պիլէն Լէօնարդօյին, Իչխանուհի Արաշիձէին, Անդրօնիկ Պօլիխովին, Էգրանին.

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Կուկիայում, Սիմէօնովսկի փողոցի վրայ, Չախվերդեանի տանը.

Հիւանդներին ընդունում են ամեն օր, նաև տօն օրերին առաւօտեան ժամի 9—11. ՆԱԻՍԱՐԴԵԱՆ—*խիրուրգիական և վէներական (սիֆիլիտական) հ.,* ՐՈՒԴԿՕՎՍԿԻ — *կանանց և ներքին հ., ժամի 11—1.,* ԼՈՒՆԿԵՎԻՉ— *աչքերի, կաշուի և վէներական հ.,* ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ — *ներքին հ. ժամի 5—7.* ՊԱՎԼՕՎՍԿԻ--*ջղային, հոգեկան և ներքին հ.,* ՈՒՇԱԿՈՎ — *երեխայոց հ.,* ԾԱՂԿԱՀԱՅՈՒԹԻՒՆ *առաւօտեան ժամի 9—11, չորեքշաբթի և շաբաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 ընդհանուր* ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. *Հիւանդասնոցը ունի գիշերապահ բժիշկ և ընդունում է* ԴԻՇԵՐՕԹԻԿ *հիւանդներ.*

ԱՂՋԱՏՆԵՐԻՆ *անվարձ է բժշկական խորհուրդը և դեղը.*

Հիւանդասնոցում ըընակվում է բժիշկ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԸ.

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը սկըսվում է ժամը 9-ին և չարունակվում է մինչև 1 կէսօրից յետ.

Երէ.—*շաբթի.— Գավրօնսկի՝ մանկաբարձական և կանանց հիւանդութեանց համար,. Գօրալէվիչ և Լիսիցեվ՝ ներքին հ., Ռօտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Շահմբօրսկի՝ վէներական և կաշուի հ., Քրէչարեանց 1-ն՝ խիրուրգիական և աչքի հ.*

Երէ.—*շաբթի.— Մինակեվիչ՝ խիրուրգիական հ., Բէյխ՝ աչքի հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Քրէչարեանց 2-ն՝ կանանց և երեխայոց հ., Լիսիցեվ և Վերմիչեվ՝ ներքին հ., Գաւրօվսկի՝ վէներական հ.*

Չոր.—*շաբթի. — Լիսիցեվ՝ ներքին հ., Բէյխ՝ աչքի հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Քրէչարեանց 2-ն՝ կանանց և ներքին հ., Գաւրօվսկի՝ վէներական հ.*

Հ.—*շաբթի.— Գավրօնսկի՝ մանկաբարձական և կանանց հ., Բէյխ՝ աչքի հ., Ռօտինեանց՝ կանանց և երեխայոց հ., Բաբայեան՝ ջղային և էլեքտրականութեամբ բժշկելի հ. (электротерапія), Լիսիցեվ և Գաւրօվսկի՝ ներքին հ., Քրէչարեանց՝ սիֆիլիսի և սեռական հ.*

Ո—բթ.—*Մինակեվիչ՝ խիրուրգիական հ., Ռախտուռով՝ մանկաբարձական, կանանց և երեխայոց հ., Կրասնոդէմսկի՝ Լիսիցեվ և Վերմիչեվ՝ ներքին հ., Շահմբօրսկի՝ վէներական և կաշուի հ.*

Շ—բթ. — *Լիսիցեվ՝ ներքին հ., Բէյխ՝ աչքի հ., Բաբայեան՝ ջղային և ներքին հ., Քրէչարեանց 2-ն՝ կանանց և ներքին հ., Գաւրօվսկի՝ վէներական հ.*

Օ*բրէխտ տատի հ. ընդունում է իր մօտ խնդճ հիւանդներին ամենայն ժամանակ բժշկանոցի տոմսակով.*

Դիրեկտոր բժշկանոցի բժ. Լիսիցեվ.

ՓՈՍՏ

Թիֆլիզի փոստի կառավարութեան մէջ ընդունվում են և տրվում, ամեն տրակտ և ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստի իրեր, ամենայն օր, բացի տօն օրերը, առաւօտեան 8 ժամից մինչև 1 կէսօրից յետ: Բացի դրամից ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերը, առաւօտեան ժամը 7-ից մինչև 8 և 3-ից մինչև 7-ը կէսօրից յետ, իսկ կիւրակէ և տօն օրերը 7 ժամից մինչև 10 առաւօտեան և 3-ից մինչև 7 կէսօրից յետ, ընդունվում են և տրվում հասարակ նամակներ.

Ռուսաստանի և արտասահմանի փոստը դուրս է գնում Թիֆլիսից ամեն օր բացի կիւրակէ և տօն օրերը, փօթիի տրակտը (երկաթուղու միջոցով) ամեն օր, Երևանեան կարսինը երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ, Նուխուռնը և Կախեթինը կիւրակէ և չորեքշաբթի, Բագուինը, Ելիսաւետոպոլի վերայով երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ.

Ն ա մ ա կ ն ե ր.

Քաղաքային փոստով նամակն արժէ 3 կ.

Բաց նամակ օտար քաղաքներ. 3 կոպ.

Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները ծածկուած նամակը արժէ (1¹/₆ լոթ ծանրութեամբ) 7 կ.

Պատուիրած նամակների գինը կրկնակի է.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 5-го МАРТА 1881 г. Типографія Акц. Энфіаджянцъ К-

Տուն բժշկապետ Մ. Ռոտինեանց.